

## ԳԼՈՒԽ Ա

Փոքրիկ խումբ մը տասը-տասներկու ձիաւորաց, շտապաւ Բագրեւանդայ արեւելեան կողմը՝ Կ'ոգովիտի հիւսիսը կը դիմէր, ժամանակը երեկոյեանալու մօտ էր, եւ յայտնի կ'երեւար թէ այդ խումբը բաւական հեռուէն կ'ուզար՝ երբ դիտող աչք մը նկատէր լռութիւնը, որ յոգնածութեան հետեւանք էր, արեւէն այրած կերպարանքները եւ փոշին, որ ամենուն ըզգեստները կը ծածկէր եւ ձիերուն քրտինքը, որ կը թորէր:

Պատանի մը շքեղ հագուած, գեղեցիկ նժոյգի մը վրայ նստած կը ձիավարէր. իւր կերպարանաց փափկութեան ու գեղեցկութեան հետ տխրութիւն եւ հոգ նկարուած կին երեսին վրայ: Չէր խոսէր, չէր նայէր շուրջը, այլ միայն ճամփան կը շարունակէր: Ուր ետեւէն շրշայ պատող խումբը թէ իր սպառազինութենէն, թէ՛ խրոխտ եւ զինուորական կերպէն կը յայտնէր թէ թիկնապահք էին այդ պատանուոյն, որ իշխանագուն մ'էր:

Աշնան շամանդաղը եւ մուխը միատեղ իջան երկրիս վրայ, երբ մեր խումբին գլխաւորը, որ հիսնամեայ, մեծագլուխ, ցլապարանոց մարդ մ'էր եւ որ երիտասարդին աչ կողմէն կը ձիավարէր, դարձաւ պատանուոյն եւ հաստ, բայց կամաց ձայնով ըսաւ.

– Ահա Վարդանայ բերդ, լոյսերը կ'երեւանք իշխան, քառորդ մը միայն ճանապարհ ունինք: Կ'երեւի թէ շատ յոգնեցար:

– Յոգնութիւնը հոգ չէ՛, Չաւեն,– պատասխանեց երիտասարդը,– մայրս վախճմ մտատանջութեան մէջ է հիմա:

Դարձեալ լռութիւն յաջորդեց, միայն ձիերու սմբակներու ձայնը կը լսուէր. ձիաւոր մը փոթորկելով գնաց աներեւութացաւ, եւ խումբը փոքրիկ լիճի մը բովէն պտոյտ ընելով եւ ժայռն ի վեր բարձրանալով մեծ դռան մը առջեւ կանգնեցաւ. ձիերը սկսան խիսնջել եւ գետինը ծեծելի դռները ճռնչեցին բացուեցան, Վարդանաբերդի գաւիթը ջահերով լուսաւորուեցաւ վայրկենին, պատանին հագիւ թէ իջաւ ձիէն՝ երիտասարդ սեւազգեստ կին մը տեսնուեցաւ, որ դահլիճին սանդուխին գլուխը կեցուած իրեն կը նայէր: Ի՞նչ կար նորա անբացատրելի նայուածքին մէջ: Այսչափ միայն կարելի է գրուցել, որ զգայուն մօր մը բոլոր սերը, յոյսը այդ նայուածքին մէջ էր, թեպէտ ամսուան մը